ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունվարի 2009 թվականի N48 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 878-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելվածի «4.4.3. Կրթություն և գիտություն» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 13-րդ ծրագրային դրույթի 13.2. միջոցառման՝

ա. 3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» իրավական ակտի մշակման նպատակով հանձնաժողովի ձևավորում և աշխատանքների կազմակերպում, նյութերի հավաքագրում, ուսումնասիրում և ամփոփում»,

բ. 4-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը»,

2) 13-րդ ծրագրային դրույթի 13.5. միջոցառման՝

ա. 3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և գիտության ոլորտի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերի մշակման նպատակով աշխատանքային խմբի ձևավորում և աշխատանքների կազմակերպում, նյութերի հավաքագրում, ուսումնասիրում և ամփոփում»,

բ. 4-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

Գիտության ոլորտի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերի մշակում և սահմանված կարգով դրանք ՀՀ կառավարություն ներկայացնելը»,

գ. 5-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության զարգացման 2 ծրագրի մշակում և հաստատում»,

3) 14-րդ ծրագրային դրույթի 14.2. միջոցառման 4-րդ սյունակն սկզբից լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգի հաստատում»,

4) 15-րդ ծրագրային դրույթի 15.1. միջոցառման՝

ա. 3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը»,

բ. 4-րդ սյունակում «5» թիվը փոխարինել «2» թվով,

գ. 5-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «4» թվով և «5» թիվը՝ «2» թվով,

դ. 6-րդ սյունակում առաջին «5» թիվը փոխարինել «4» թվով և երկրորդ «5» թիվը՝ «2» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

2009թ. հունվարի 21

Երևան